

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ


Տարեկան . . 12 Ֆր.
Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Երկու բիւ մեկ ծրարով
Տարեկան . . 11 Ֆր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2,60 Տոյար
Վեցամսեայ 1,50 "
Կ Ա Ն Խ Ի Կ



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԹ

ՀԱՍՑԷ

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրութիւնք եւս

չեն տրուիր

Կը խնդրուի մեր յարգոյ
բաժանորդներէն որ ալիւս չը յա-
պաղեցնեն իրենց բաժնեգինները :

ՃԱՄԲՈՐԴԻ ՄԵ ՊԱՏՄԱԾԸ

Ու է կուսակցութեան մը կը
պատկանիք . —

Ինչպէս է ժողովուրդի տրամա-
դրութիւնները գէպի յեղափոխու-
թիւն . —

Ինչ կը խորհի կռուող տարրը . —
Կուսակցականներ ինչ ջուրի
վրայ են եւ ալին :

Սա վերի հարցումներու հե-
տեւեւը կը պատասխանէ ճա-
բորդ մը .

— «Ոչինչ կուսակցութեան չիմ
պատկանիք : Ժողովուրդի ձգտում-
ները գէպի յեղափոխութիւն շատ
ուրախալի են, և կռուող դասա-
կարգը կուզէ աւելի գիտակցօրէն
հործել . սակայն զէնք չը կայ,
այդ հոգին ժողովուրդին հայթա-
յթող մարմինը կը պակսի մեր մէջ .
Ինչ որ ինք, կռուող տարրը, նկա-
տել տուած է կուսակցականնե-
րուն :

«Նախ մեզ հոգի տուէք, զէնք
տուէք, երբ այդ ոյժը ունենանք,
այն ատեն միայն հրոսախումբեր
կարող են սահման անցնիլ . ապա
թէ ոչ իրենց երեւումն աննպա-
տակ է և փնտասեր . վասն զի մէկ
քուրս սպաննելու փոխարէն տասն
հազ հայեր կը ջարդուին : Ե-
թէ ու է խումբ մը այդ տեսակ
տխմար նպատակի մը գիմէ, մենք
ստիպուած պիտի դիմադրենք ա-
նոնց . . .

«Կռուող տարրը արդէն կազ-
մուած է զատ զատ խմբային ա-
նուններու տակ առանց ու է կու-
սակցութեան մը պատկանելու :

«Գաղով կուսակցական կարգ մը
բախտախնդիրներու, ատոնց վրայ
խօսիլը անգամ զգուանք կը պատ-
ճառէ մարդուս :

«Կարծեմ լսած էք Պարսկաս-
տանի և Ռուսաստանի մէջ, վեր-
ջերս կարգ մը Գաղակցականնե-
րու ի գործ դրած զգուանք կը պատ-
ճառէ . օրինակ, բռնի աղջիկ ա-

ռեւանգի, Հայոց տուններ մտնել
գործեր յափշտակել, գանակոծու-
թիւններ ընել և այլն, որը շատ
գէշ աղջած է ժողովուրդին վրայ,
և որոնց պատճառով, այդ կու-
սակցութեան պատկանող ամեն տե-
հատ, ըլլալ սգի. կամ ոչ, մուտք
չեն կրնար գտնել երկէք հանրու-
թեան մէջ : Հայ ընտանիքը ստիպ-
ուած է իր մայրական ծոցը, իւր
ընտանեկան յարկին դուռը գոցել
ատոնց առջեւ (*) :

«Իսկ Հնչակեաններ բաւական
համակրութիւն կը վայելն ազգէն,
որոնք մասնաւոր տոմսակներով,
որը կապացուցանէ իրենց Հնչակ-
եան ըլլալը, կը ներկայանան և կը
հիւրընկալուին սիրով» :

Ճամբորդը իր խօսքը վերջա-
ցնելով կը յարէ, «Միութիւնը» որ
կայացաւ, բաւական յոյս կը ներ-
շնչէ ժողովուրդին . թերեւս ամեն
բան կարգի մտնէ» :

ՁԱԼ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՐԻՁ, 27 Օգոստոս

Ֆրանսուս եւ Ս. Պապը

ՀՈՌՈՎՄ 23 Օգոստոս, (Էսթ-
Ուէսթի թղթակցէն) .

Եթէ տղիս թերթերուն նայիք
Ֆրանսայի մէջ ալիւս վերջացած
են թէպէտ միաբանութեանց հա-
մար տեղի ունեցած խառնակու-
թիւնները, բայց պիտի վերսկսին
երբ աշնան վերաբացուի Ֆրանսա-
կան Սենեակը : Իրաւ էթէ այստե-
ղի թերթերուն շատ ակամջ կախե-
լու չէ, որովհետեւ անոնք շատ տե-
գամ գործերը չը շարունակեն ի-
րենց վառ երեւակայութեամբ :
Բայց անցնինք և գտնենք խնդրոյն :

Հաստատագրոյն աղբիւրներէ կի-
մանամ (մեկ թղթակցից) բարձրագ-
տիճանի կլերական մը և ներկայա-
ցուցիչ մեծ միաբանութեան մը,

(*) Ականջը թփրտայ Ե. . . . ի
նիւսայն խմբագրին . իրեւս մօտ է
ժամը ուր ինքը եւ իրեններն ալ նոյն
պատուոյն արժանանան :

Ծ. Յ.

շնորհիւ իր բարձր գիրքին, կարող
է լսել և տեսնել վատիկանի մէջ
բոլոր անցած-գարձածները) թէ Ս.
Պապը, կարգինալ Ռամփոլայի մի
շաժտութեամբ, բոլորովին կողմա-
կից է Ֆրանսական կառավարու-
թեան՝ միաբանութեանց մասին
բռնած ընթացքին : Կարգինալ
Ռամփոլայ՝ որ Լեոն ԺԳ.ի առա-
ջին մինիստրն է, ուղում է անպատ-
ճառ սերտ բարեկամական կապեր
ունենալ Ֆրանսական կառավարու-
թեան հետ, հակառակ վերջնոյն
կրօնական միաբանութիւններու դէմ
հանած հալածանքներին : Յայտնի
է թէ ամէն տարի, ամառուան ե-
ղանակին, բազմաթիւ Ֆրանսացի-
ներ քահանայի մը կամ հպիսկո-
պոսի մը առաջնորդութեամբ ուխ-
տի կուգային Հռովմ Ս. Պապը
տեսնելու, անոր օրհնութիւնն առ-
նելու և Յուստենական քաղաքի
(Հռովմ) շէնքերն այցելելու : Հա-
մար : Այդ ուխտաւորները ահագին
գումարներ կը թողուն Ս. Պապին
և առհասարակ Հռովմ քաղաքին :
Ֆրանսացուն առատաձեռնութիւնը
յայտնի է ձեզ, մանաւանդ երբ
խնդիրը կրօնական ունեւոր շուրջը
կը գտնայ : Գիտէք թէ Պապի
պիտանէին ամենամեծ մասը Ֆրան-
սան է որ կը հայթալթէ : Ֆրան-
սացի ուխտաւորները 50 կամ հա-
րիւր հազարներով նուերներ կը նեն
Ս. Պապին :

Այդ այս տարի շնորհիւ կար-
գինալ Ռամփոլայի տիպլոմաթի-
քական հայեացքներուն, Հռովմէն
հրաման զրկուած է բոլոր Ֆրանսացի
հպիսկոպոսներուն, որպէս զի ուխ-
տագնաց խմբեր չկազմուին : Ինչո՞ւ
այս արգելքը : Որովհետեւ վատի-
կանի առաջին մինիստրը կը վախ-
նայ որ ուխտաւորները և անոնց
պետերը գանդատներ ընեն Ս. Պա-
պին, Ֆրանսական կառավարու-
թեան վարժունքներուն դէմ : Սա
կարգինալ Ռամփոլայի քաղաքա-
կանութիւնն է :

Անգղիա, Լոնտոն

26 Օգոստոս, (Էսթ-Ուէսթի յա-
տուկ թղթակցէն) .

Թագադրութեան հանդէսը վեր-

ջացաւ, Լոնտոն կամաց կամաց
ճամբայ կը դնէ իր հիւրերը և այ-
ցելուները : Պարսից շահը մեկնե-
ցաւ Բարիդ . Հնդկական բանակը
որ Լոնտոն եկեր էր թագադրու-
թեան մոտակայիւ, մեկնեցաւ
շարաթ օր գէպի Հնդկաստան .
մեկնեցան նոյնպէս ուրիշ գաղթա-
կանութիւններու տեղացի զինուոր-
ները . բայց ասոնք մեկնելէ առաջ
ներկայ գտնուեցան Ծովային զօ-
րահանգէսի մը որ տեղի ունեցաւ
Սփիթհէտի մէջ : Անցեալ ուրբաթ
օր հասարակութեան առջեւ բաց-
ուեցան Ուէսթմինստը եկեղեցւոյն
դռները, ուր տեղի էին ունեցեր
թագադրութեան արարողութիւն-
ները, եկեղեցին այնպէս թողուցեր
էին ինչպէս որ էր թագադրու-
թեան ժամանակ, այսինքն իր զար-
դարանքներով : Ահագին բաղմու-
թիւն մը վազած էր եկեղեցին այ-
ցելու : Հոգաբարձութիւնը կէս
շիլինկ մուտք դրած էր, հակառակ
այս բաւականին բարձր գինն հե-
տաքերիները խիստ բազմաթիւ
էին, մէկ ու կէս քիլոմէթր տարա-
ժութեան վրայ մարդիկ՝ այր և կին
իրարու ետեւ կանգնած կը սպասե-
ին իրենց կարգին, եկեղեցուն մէջ
մտնելու համար :

Անցեալ ուրբաթ օր տեղի ունե-
ցաւ նաեւ տեսակ մը կրօնական ա-
րարողութիւն . այդ էր հան-
գուցեալ վիգիլիայի թագադրու-
թեան զարդին տեղափոխումը՝ Ուայթ
կղզւոյն Օսպօրն պալատէն ի փօրթ-
մուս :

Մելիք Ս. Դաւիթ-Բեկ

ՊՈԻՔՐԷՇ, 12 Օգոստոս

Վերջերս Ե. . . թերթի 437 թիւի
մէջ, հանդիպեցանք չորս ստորագրու-
թեամբ առանց փաստի հայտարար
ուածքի մը :

Այդ մարդուկները, անձնական ո-
խեր յագեցնելու համար, շատոնց է
որ «յայտնի խաչագող» եւ «գող»ի (*)
մը պաշտպան հանդիսացած էին, և
այս անգամ, աւելի յառաջ երթալով,
Տէր Հայրի մը փաստաբան կը ներկա-
յանան ու նոր ստուգութիւններու կը դի-
մեն :

Այդ չորս ստորագրողներէն միայն

(*) Ապացոյցները քննվորիս են :

Պ. Պարակեանին պատասխանել բաւ կը համարենք, զի սա մեր նախկին պաշտօնակիցն էր, իսկ միւս երեքը կարգաւ գրիւ չը գիտցող խեղճեր են:

1. Այո՛, բողոքեցինք թէ՛ Տէր Հայրը «յայտնի խաչագող» եւ «գող»ին ինչու ստորագրել տուաւ ժապաւինեալ տետրակը՝ որովհետեւ ինչպէս որ ըսած ենք, նախապէս ամեն ինչ պատմուած էր իրեն Տիրար Ա. ի տանը մէջ: Եւ յայտարարած էինք թէ մեր պատուոյ նախանձախնդրութիւնը չը ձգէր որ անաղարտ անուննիս գողի մը հետ ժապաւինեալ տետրակին եւ ազգային թերթերու մէջ համահաւասար տեսնուին:

2. Եթէ ձեր ըսածին նման խաչագողը դրամ հաւաքած է, ինչու գանձապետին սանդիւմ մը չէ յանձնած: Եթէ դուք նորէն հակառակը պնդէք թէ՛ դրամ հաւաքած է, այն ժամանակ ձեզ պիտի ըսենք, այդ «յայտնի խաչագող»ը կրկին խաչագողութիւն մը գործած է, ձեր եւ ուրիշներու մեղաւորութեամբ: Երբեք տեսնուեալ ինչպէս որ ըսինք, գանձապետը սանդիւմ մը չէ ստացած անկէ:

3. Իսկ եթէ, ձեր ըսածին նման, Տէր Հօրը մէկ քանի խանութի ցոյց տուած ըլլալուն համար իր անունը ժապաւինեալ տետրակին մէջ գրել պէտք ըլլար, այն ժամանակ, փողոցներու մէջ հանդիպող շատ մը մեղմաններու անուններն ալ գրել հարկ պիտի ըլլար, որովհետեւ անոնք ալ բաւական թուով խանութներ ցոյց տուած են Տէրտէրին:

4. Ո՛վ րաւ ձեզ թէ յանուն գաղթականութեան ժապաւինեալ տետրակին մէջ ստորագրած եւ զանի վաւերացուցած ենք: Դեռ որ դրամը մենք հաւաքեցինք, հաշուոյն ճշդութիւնն ալ մեր ստորագրութեամբ եւ Ընթերցարանի կնիքով պէտք էր վաւերացնէինք: Եւ այնպէս ալ ըրինք՝ այս ալ Պ. Պարակեանի՝ իբր մեզ պաշտօնակից՝ ժապաւինեալ տետրակին մէջ գրածին տակ միայն:

Ալ ընթերցողը թող գտնէ թէ ինչ ցաւալի հակասութեան մէջ ինչպէս էր այդ տղեկը, որ այսօր առանց կարծեւրու կեցնէ կրէ թէ՛ «Ընթերցարանի

գործադիր մասնախումբը անպաշտօն էր, ընդհանուր քուէարկութեամբ ընտրուած չէր, բոլորովին անկարող էին Ընթերցարանի վարչութիւնը ստանձնելու, իրենց ստորագրութիւնը գնելու ժամանակի կը կարօտէին»: ուստից նման արեւն ցփեխ բաներ:

Էյ հիմա կը հարցնենք Պ. Պարակեան ձեզ թէ՛ քանի որ այդպէս էր, եւ եթէ դուք անկեղծ էիք, ինչու՞ ժամանակին չբողոքեցիք, ինչու՞ մեր հետ ինքզինքնիդ պաշտօնակցան ներկայացուցիք, ինչու՞ առանց քուէարկութեան մեղ հետ պաշտօն ստանձնեցիք, ինչու՞ ստորագրութիւն մը գնելը չը գիտնալնովիդ հանդերձ, Աստուծոյ պաշտօնը վարեցիք, ինչու՞ համար, ըսէք: Եթէ դուք ալ լռէք, ի հարկէ արդարաւոր անձերը պիտի ըսեն եւ պիտի պոռան ձեր երեսն ի վեր թէ, դուք բառին բուն նշանակութեամբը զրպարտիչ մըն էք:

5. Գալով, տիրահաշակ վարչութեան հաշիւներու ճշգրտութիւնը վաւերացնելու մասին, դուք ալ լաւ գիտէիք թէ՛ չէիք կրնար գտնէ նպարտաւոր տետրակի (*) մը չնորհըը չունեցող այդ թուղթերը վաւերացնելու ատկաւ ընթերցարանի թանգարանին մէջ ձ'ը ըսած «արժանաւոր» (*) վարչութեան իրեն արժանաւոր գործքերուն իբր մէկ նմոյշը պիտի մնայ:

7. Իսկ մեր պաշտօնավարութեան միջոցին եղած հաշիւները այն ժամանակ արդի վարչութեան ներկայացուած եւ վաւերացուած են՝ ով որ փորձ ցաւ մը ունի, թող ներկայանայ արդի վարչութեան եւ իր ցաւին դարմանը գտնէ: Բայց նորէն կըսենք՝ այս ինչ ցաւալի հակասութեան մէջ ինչպէս էք:

Հիմա առանց զարմանալու մենք ալ կը հարցնենք թէ՛ ինչպէս կըլլայ որ Պուրէշէն պաշտօնակցան նամակ մը կուղարկուի Շ... թերթի խմբագրութեան, ու — լրագրական օրէնքի հակառակ — չը հրատարակուի, բայց գողի մը պաշտպաններու կողմանէ, հայհոյութիւններով լի, ոչ պաշտօնա-

(*) Փափաքողք եթէ տեսնել կուզեն, թող զինն արդի վարչութեան:

կան նամակ մը կը հրատարակուի հոն: Միթէ՞ հոս ատիթը չէ ըսել թէ՛ այդ Շ... խաչագող թերթը «խաչագողներու օրական» մըն է:

Ոչ պարոն, Իրաւունքի եւ իր խմբագրին հասցին ուղղուած ձեր լղր-ճուկ եւ լպիրշ հայհոյութիւնով չէք կրնար արատ մը բերել այդ խմբագրին պատուին: Արտասահմանի հայրութեան լրջամիտ դատակարար վաղուց կշռած է Իրաւունքի եւ իր խմբագրին արժանիքը. ու այդ պատճառաւ է որ, մինչեւ այսօր այդ թերթը գոյութիւն ունի հակառակ խաչագողներու ստուար վնասակի մը կամքին:

Ոչ, Պ. Պարակեան, ձեր գիտածին նման չէ՛, եթէ Իրաւունքի յարգելի խմբագիրը, Պուրէշի մէջ ուղեր մի քանի բաժանորդ աւելցնել, քաջ գիտնալու էիք որ այսօր ձեր կողմանէ կաշառուած պիտի ըլլար, ինչպէս Շ... խաչագող թերթը կաշառած էք... յիշաւի կըսենք, բայց լաւ համոզուելու էք թէ՛ բնաւ չը պիտի կրնաք կաշառել ու եւ ատեն մը արդարութեան գէմ ոչ Իրաւունքը եւ ոչ Գորպէթեանը:

Առ այժմ այսպիսի եւ կը խոստանանք ուրիշ ատիթ, երբ որ պէտք կը տեսնենք, Իրաւունքի խմբագիր Պ. Պարակեանը թէ ո՞վ է:

Պուրէշի Հայկական Ընթերցարանի
Նախկին Կարգադիր Մասնախումբ
Գրիգոր Նազարեան
Գրիգոր Պատուիրակ
Յովհաննէս Փափագեան

Դիտ. Խմբ. — Լեւելի լաւ է որ ուրիշ ատիթ այս կարգի ձանձրութիւններ յանձն չառնէք. որովհետեւ մեր ընթերցողները արդէն խորապէս համոզուած են թէ Շ... թերթը Անկեւ լանցն է ընկածներու եւ մեզմէ վնասուածներու, եւ առ այս նոր փաստեր լսելու պէտք չեն տեսներ:

ԳՈՂՈՒԹԻՒՆ

«Յանցանքը որո՞ն է» խորագրով հրատարակութեան առթիւ թարոյսապէս մեռած մարդու կի պակաս մնացած փառաւոր մէկ տիտղոսն ալ երեսն հաւ. որով ամեն նաստոր եւ զշուկի ստահակ եւ լօթի մը ըլլալուն ալիւս տարակոյս չը մնայ:

Որոշման մէջ միշտ անդրադուրի պիտի մնամ, որչափ որ իր «զրպարտիչ» փառաւոր կտորով ինքը «Վ. օրգո» — «Կէտ» — «Էռաստղ» ստորագրութիւններով փառաւորներ եւ ցիխեր իր բերնէն դուրս տալ ու շարժէ հասցէիս, բնաւ կարեւորութիւն չը պիտի տամ այդ սրի կայի մրտնոյններուն:

Ահա անցեալ չորեքշաբթի իր հրատարակած նամակին խնդիրը եւ իրողութիւնը:

Աթէնքի մէջ անգործ մնացած միջոցիս դիմած էի Պապա Գասպարին ապրիլու համար գործ մը գտնելու. բայց մը որ բնաւ ամօթ չեմ սեպեր ինծի: Իսկ Յեղեղիւս կտի գործով մը կրկին երկիր մտնելուս մասին բանակցութիւն եղած է այնպիսի կարեւոր Դաշնակցականներու հետ որ՝ եթէ երբէք ժամանակն հարկ ըլլար երկիր մտնելուս պատրաստուած ծրագիրն գործադրելու, արդէն այլ Դաշնակցականները չը պիտի վստահէին այդ ձեռնարկի գողտիւն վարդօյի նման անկարեւոր մէկի մը յայտնելու. ահա իր սրտի կսկիծը եւ փորձ ցաւը:

Պ. Պապա Գասպարի հասցէն ինծ ծանօթ չըլլալով նամակս ուղղած էի Շ... ի խմբագրութեան եւ պահարանին վրայ գրած էի՝ «Նաճեցք յան Անդ Պ. Պապա Գասպարին»

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ (7)
ԹԻԱՊԱՐՏԸ
ՄԱՍՆ ԵՐԿՐԱՐԻ
ՄԱՅՐ ԵՒ ՈՐԴԻ

— Ո՛հ, տարաբաղ զաւակս, խեղճ զաւակս, կը կրկնէր կինը՝ արցունքի հեղեղներ թափելով...
— Ինչպէս... ինչպէս եկար մինչեւ հոս, մայր իմ, հառաչեց երիտասարդը՝ խղճուած ձայնով մը:
— Մի՛ հարցունք, զաւակս... միմիջեց թշուառ կինը: Բաւական է որ դուն գրկիս մէջ ես... բաւական է որ քու կարօտովդ չմնացի աշխարհքիս վրայ: Բայց ի՞նչ ըրիր... ի՞նչ է յայնպեք... ի՞նչ չու կաշկանդուած ես այս սոսկալի շղթաներու մէջ:
Երիտասարդը սարսափեց... իրեն այնպէս եկաւ որ կը խղճուէր իր հոգեկան փռձկութեան մէջ:
Ի՞նչ ըսէր... ի՞նչ պատասխանէր այն կնոջ, որ իր մայրն էր, եւ որուն անձնութեան հանդէպ կը զոգողար, ինչպէս կը զոգայ մեղապարտ մը պաշտած սուրբի մը առջեւ:
Լուծֆի աղա, քիչ մը հեռուն կեցած, խորին

լուծֆեան մը մէջ յափտակուած եւ զգածուած՝ մտիկ կընէր:
— Խօսէ՛, զաւակս, խօսէ՛... ո՛հ, մի՛ լռեր... կրկնեց վշտակիր կինը՝ մորմոքուած ու անզուսպ ձայնով մը:
— Պատմութիւնս երկար եւ միանգամայն աղետալի է, մայր իմ, նկատել տուաւ երիտասարդը: Թո՛ղ ատկեալ... անցեալս մի՛ յիշեցունք ինծի: Ո՛հ, միայն թո՛ղ որ քու կարօտն առնեմ, թո՛ղ որ քու անձնութեանդ առջին ծուրն գնեմ ու սուրբի մը պէս պաշտեմ քեզ: Մոռանա՛ք... մոռանա՛ք ամէն բան: Աշխարհքս դուռն ես... կեանքս դուռն ես... Այս խաւարին գերեզմանը աշխարհքս չեւերեալ... Դուռն խօսէ՛... գունդ սփռի՛ զիս...
Հակառակորդին այս աղետալութեան տեսարանը չը նկատաւորուի: Մա գուս բացատրութիւնը կը ջախջախուի կարծես իր բովանդակ ցնցումներուն մէջ: Այնքան յուզիչ էր ան, այնքան սարսափէր էր ան, որ՝ առանձնարարին քստմիջի միթութեանը մէջ՝ կուրուստապոէր բոլոր գաւառի թեմերը:
— Ի՞նչու, զաւակս, ի՞նչու չես ուզեր բռնել... հեծկտաց կինը՝ փռձկութեամբ մօտ ձայնով մը:
— Ի՞նչ ըսեմ, մայր իմ, ի՞նչ ըսեմ... ընդհատեց կալանաւոր երիտասարդը՝ վարանոտ ու երկեւզալի նայուածք մը նկատելով Լուծֆի աղայի վրայ: Յայտնեցի թէ իմ անցեալս աղետալութիւն է, իմ անցեալս անաւոր է... մէկ խօսքով՝ անիծեալ կեանք մը ունեցած եմ, մայր իմ... ներք ինծի որ չեմ կրնար բան մը ըսել:
Լուծֆի աղա չկրցաւ համբերել... կամաց մը մօտեցաւ կնոջը եւ խնդրեց որ մեկնին:

— Ո՛հ, պարոն, պարոն... Աստուծոյ սիրո՞յն ըլլա՛յ, կը պաղատիմ ձեզ, հեծկտած կինը՝ վայրկեան մըն ալ... թողէ՛ք որ զաւակս կարօտն առնեմ, թողէ՛ք որ հոգեւոյս արցունքները թափեմ զաւակս շղթաներուն վրայ...
Կալանաւորը խօսեցաւ: Պահ մը՝ Լուծֆի աղայի աչքերուն մէջ եւ մօրը վրայ նայեցաւ, ու՛ սարսափահար մանուկի մը պէս, ընկճուած մնաց իր տեղը:
— Հոգ չէ՛, տիկին... կրնաք աւելի երկարօրէն տեսնուիլ, նկատել տուաւ Լուծֆի աղա: Միայն թէ՛ վաղուան կը թողուք ձեր այցելութիւնը: Պատճառները կը յայտնեմ ձեզ:
Այս վճռական խօսքին վրայ, թշուառ կինը չկրցաւ առարկել, նկատելով որ Լուծֆի աղա չափէն աւելի բարիք մը բրած է իրեն:
— Կընդունիմ, պարոն թիարաճապետ, միմիջեց զոգող կինը, գիտնալով որ դուք բարի հրեշտակի մը պէս պիտի առաջնորդէք զիս եւ պիտի թողուք որ մայր մը իր մէկ հատիկ զաւակէն կարօտ չառած՝ չմեկնի ասկից: Ա՛յ, կը յուսամ թէ ուրիշ ո՛ր եւ միթին տարակոյս մը չէք կրնար ունենալ: Կը յուսամ թէ մօր մը սրտին ի՞նչ ըլլալը գիտէք: Երբ որ ասկից պարտաւորուած մեկնիմ, ա՛յ սիրտս՝ իմինս չէ, ա՛յ հոգիս իմ՝ էութեանս մէջ չմնար... Եթէ մեկնիմ ասկից, գիտնալու էք որ գիակ մըն եմ... մեռած մըն եմ այլեւս: Մեռած, այո՛, մեռած... կը հասկնա՞ք:
Լուծֆի աղա գլխու նշան մը ըրաւ, որուն մէջ բաժանումը մը բոլոր սոսկումը կար:
Վշտակիւր կինը, վերջին անգամ ըլլալով, համ-

ԱՆՁՆԱԿԱՆՆԵՐ՝ Պատանիներն վրան նշանակած էին նաև Ալեքսանդրի իսկա-կան հասցէս :

Ապագային կերպով վստահ էի թէ Պապա Գասպարը իսկոյն պիտի պատահարէր այդ կորուստը համա-կէս , որովհետեւ ինքն էր որ խզիւ-տոս անգործ վիճակէս մէջ ինձ խորհուրդ կուտար Պոլսի մասին եր-թալ ու անձնական գործ մը գրա-նալ : Ի դժուար պայմաններ Պապա Գասպարի պատասխանին :

Վստահ հասնելուս վարդօն ինձ ըսաւ թէ նամակս Պապա Գասպարին յանձնուած է : Պապա Գասպար . . . կը գտնուէր և վարդօն գիտէր անոր հասցէն , քանի մը անգամ հասցէն ուղիւէս վերջ ձեռնարկի եղաւ ալիւս , կարծե-լով թէ Պապա Գասպարս խմածա-կի : Նամակս ստացած և պատաս-խանած է :

Ղրկած նամակս Պապա Գաս-պարի սեպհականութիւնն էր այ-նու , բայց մեր սովորն այդ նա-մակը փոխանակ Պապա Գաս-պարին տալու ԳՈՂՆԱԼՈՎ իր քոյ-կը պահէ , իսկ այժմ անամօթա-բար ինքը իր ձեռքով իր ընկե-լով և մտերմի վստահութիւն չա-րաչար գործածելի և բոլոր գործ-ութիւնը հրապարակ կը հանէ :

Ինկած մարդուկի այս քառամեկի-րն թացքին ԳՈՂՆԱԼՈՎ-էն զատ ինչ անուն կրնայ տրուիլ :

Այս թշուառի խնկի և յիմար-րաւորութեան ալիւս տարակոյս կը մնայ : Արդէն խաչագողներու վաճառ-նայ պիտի ըլլայ , որպէս զի ժող-վուրդը լեցուն բերնով և այրած սրտով օ՛րս եղաւ ըսէ :

Յ. Կ. Ճանկիրեան

Յ. Գ. — Այդ նամակիս մէջ ե-րած անարկութիւնը ոչ իրաւունքի դէմ էր և ոչ իր խմբագիրներուն : Նոյն

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամերիկայի Միացեալ Նահանգ-ները գտնուող մէկ քանի լեհացի-հին կաթոլիկներ ուզեր են եպիս-կոպոս ձեռնադրուիլ Գեր. Սարա-նանէ . սա ծանուցեր է թէ Հայոց մէջ եպիսկոպոսական ձեռնադրու-թիւնը միայն կ'ոթոգիկոսը կրնէ . նոյնիսկ այդ դիմողները քահանայ ձեռնադրուիլ չէ ուզեր առանց ար-տօնութեան :

— Բողոքներ իրենց դառն վի-ճակը մի քիչ ամոքելու յոյսով հե-ռագիր հեռագրի վրայ կը տեղա-ցնեն Պատրիարքարան որ իրենց նոր ընտրած առաջնորդը հաստատ-ուի և օր առաջ իր պաշտօնատե-ղին երթայ :

— Ամսոյս 14 ին սկսած Աֆիոն Գաւառահիւսարի մեծ հրդեհէն՝ որ քաղաքին 2/3 մասը մոխիր դար-ձուցած է , այրուած կը կարծուին Հայոց եկեղեցիին ու վարժարանն ալ :

— Արքեպիսկոպոս Տրիպոլի-Հայերը տարիներէ ի վեր Պատրիարքարա-նէ , Առաջնորդարաններէ կը խնդ-րէին ու կաղ-չէին որ իրենց քա-հանայ մը զոյգուի , որուն ապրուս-տը կապահովին . բայց ամէն կողմէ լռութիւն պահուցաւ : Կիմանաք թէ վերջերս կարգ մը Հայեր ճա-րահատեալ գիմած են Աղէքսան-դրիոյ Յունաց Պատրիարքին , որ-պէս զի արտօնէ տեղւոյն Յայն կղե-րին՝ Հայոց ալ հոգեւոր պէտքերն հոգալու առժամապէս : Սակայն այս պարագան տեղւոյն չատ մը հայերուն ցաւ պատճառներ է և միաներուն կրնան ալ չեն ուզեր Յայն կղերին առջեւ ծնրադրել ու խոստովանիլ : Հետեւաբար կրկին սկսած են մեր Պատրիարքարաննե-

րու դռները ձեռք առնել , խնդրե-լով որ անպատճառ զրկուի իրենց քահանայ մը որուն ապրուստը լի և առատ պիտի հոգան :

Արքեպիսկոպոս Տրիպոլի-Հայերն մեր կողմէ թափառաշրջիկ քահանային ու՛ որ փոխանակ այս կողմերը իրարու ոտք առնել աշ-խատելու ու այդ կերպով քահա-նայական դերքը նուաստացնելու , գիմեն Տրիպոլիս , ուր իրենց հացը ապահովուած պիտի գտնեն , և տեղ-ւոյն կլիմային ալ կրնան վարժուիլ հետզհետէ եթէ յառաջիկայ աշնան ամիսներուն երթան հոն :

— Պէտքաւոր Նահանգին էն հարուստ հայը , իշխան Գրիգոր Յովհաննէսեան Մանուկ-պէյ, Օգոս-տոս 4/17 ին մեռաւ Օտեսայի իր ապարանքին մէջ 49 տարեկան : Մանուկ-պէյին ընտանիքը բնիկ թուրքացի են : Ներքալ Ա. կայսրը 1830 ին «Քիւնազ» տիտղոսը տուած էր այդ գերդաստանի հիմնադիր Մանուկ պէյին , որ մեծ հարստու-թեամբ թուրքիայէ փոխած և ա-պաստանած է Ռուսիա :

Որչափ որ կը իշխէր մեզ պատ-մուածներէն , իշխան Գրիգոր թուոն է Մանուկ պէյի և ինքն ալ քիւնազ տիտղոսը կը կրէր . քիւնէֆ քաղա-քէն քանի մը ժամ հեռու ահագին ազարակներ ունի և կանքստիի ապարանքը ամբողջ նահանգին էն հոյակապ դղեակն է . իր հողերուն մէջ 5000 է աւելի գեղացիներ կաշ-խատին իր վարձակալ . տարեկան հարկը հազար ոսկիի չափ և կա մուտ ունի :

Ինք ամուսնացած չէր , իր այդ ահագին հարստութիւնը թողուց իր երեք քոյրերուն , որոնք Ռու-սիայէ դուրս կը բնակին և ամուս-նացած են օտարներու հետ , իշ-խանուհի Մանուկ-պէյ ,

Մարքիզուհի տը Սքիտոնի (իտա-լացի) , և Հացֆիլոս կոմսուհին (Գերմանացի) : Լ. Հերալտի թղթա-կիցը կըսէ թէ ասոնք իրենց եղբոր յուղարկաւորութեան ներկայ գտ-նուեցին Օտեսա . իսկ հանգուցեա-լին մայրը Դէլիանեանց գերդաս-տանէն էր , քոյր հանգուցեալ հայ-ազգի կոմս Դէլիանովի , որ երկար տարիներ Ռուսական կայսրութեան կրթական նախարարն եղած է :

Ինչ պէտք է ըսել մեր անճա-րակ կղերին և Ռուսահայ գործիչ-ներուն , որոնք չեն յաջողած այդ անբաւ հարստութենէն մաս մը հանել տալ և ևէ ազգագուտ նպա-տակի մը , և թողած են որ օտա-րանայ այդ գերդաստանը և իր հարստութիւնն ալ դուրս երթայ :

— Տօպրիչի Թադ. Խորհուրդը կը խնդրէ մեզմէ ծանուցանել թէ տեղւոյն Աղգ. վարժարանին համար պէտք ունի մէկ ուսուցիչի՝ որ գիտնայ լաւ հայերէն , ֆրանսերէն և երաժշտութիւն , նոյնպէս մէկ վարժուհիի՝ որ գիտնայ լաւ ձեռա-գիտութիւն , Գոհացուցիչ ամսա-կան , Դիմելու է տեղւոյն Հոգա-բարձութեան :

ԻՐԱՆԻՆԻՆԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Տ. Գ. Արապյանց , ձիադար . — Յունկարէ սկսեալ Իրաւունքն ձեր հաս-ցէին անընդհատ կը զրկուի , բացի Յու-նիս ամսոյ 3 շաբաթ դադարէն :

— Տ. Ս. Մարտիկ , Պոլսի . — Ձեր նամակը չհաստատուի :

— Տ. Յ. Պողոս , Սիւլիկ . — Կազ-թանը քէստիք . 19 1/2 ֆրանքն եւ-թիւնսին պէքէրիդ :

— Տ. Գ. Մ. Ֆիլիպի . — Ձեր ամ-բաստանութեան ո՛ր աստիճան ձիդ ըլլալը հասկնալու համար միջոցներու զիմած ենք : Ուստի յետաձգուած է ձեր նամակի հրատարակութիւնը :

բուրեց իր զաւակը , որ անխօսուկ ու ճնշուած գրութեան մը մէջ՝ իր գողգողուն շրթունքները մօրը ճակատին վրայ օտեցուց :

Այն մաքուր , տենջալի՝ ու սիրազեղ ճակտին մօտեցուց իր շրթունքներն , որոնք կարօտի ու դառնութեան մէջ ցամքած էին տասներկու տարի-ներէ ի վեր :

Յետոյ՝ մայրն ու որդին իրարմէ բաժնուեցան :

ԼՈՒՐԵՐ ԱՂԱ ԻՐ ԽՂԱՆ ՀԵՏ

Լուրժի աղա մինակ էր իր պաշտօնատունին մէջ :

Կապոյտ շուխայով ծածկուած սեղանի մը քով նստած , ձեռքը տիրութեամբ մը ճակտին գրած , կը խորհէր :

Իր երեւակայութեան հանդէպ կը պատկերանար կին մը , որ սեւերը հագած , արցունքներու մէջ դալկացած ու ծուկի վրայ եկած՝ կը պաղատէր ու կը խնդրէր իրմէն . . . կին մը՝ որ իր խոցոտուած սիրտը կը բանար իրեն ու կըսէր . « ո՛հ , գթացէ՛ք , գթացէ՛ք . . . որովհետեւ մայր մըն եմ » :

Անդին ալ , թիարանի մը զարհուրելի զննանե-րէն մէկուն մէջ կը տեսնէր երիտասարդ մը՝ որ ժանգոտած ու ծանր շղթաներով կաշկանդուած կը մնար՝ անարգ շուկի մը դիակին պէս :

Ասոնք իր աչքին առջեւ էին . . . ասոնք կերե-

ւային իրեն՝ ո՛չ թէ երազի մը մէջ ստեղծուած յղա-ցումի պէս , այլ՝ իրականութեան մը բովանդակ մերկութեամբ :

— Կեցի՛ր . . . մրմնջեց Լուրժի աղա ինքնիրեն : Ու յանկարծ սեղանին վրայէն ելնելով , սկսաւ սենեկին մէջ ման գալ :

— Այո՛ , պէ՛տք է որ գաղտնիքը յայտնուի . . . կրկնեց՝ աւելի բարձր ձայնով մը : Պէ՛տք է որ ի-մանամ ամեն բան : Մինչեւ այսօր չեմ հետաքրքր-ուած այդ երիտասարդին անցեալով . . . չեմ հա-րցուցած թէ ինչ յանցանքով դատապարտուի էին զինքը . . . մանաւանդ՝ ի՞նչու համար անզուսպ ու կատաղի դարձած էր ան՝ նոյն իսկ այս գերեզմա-նային աշխարհքիս մէջ : Երբ իմանամ այս բոլորը , ան ատեն պիտի պարզուի տեսարանը . . . պիտի պատուի մ'յն քառամեկի վարագոյրը , որուն ետին գուցէ՛ ծածկուած է երիտասարդին անցեալը՝ անա-ւոր պատկերացումով մը :

Լուրժի աղա այս մեղախօսութիւններն իրարու ետեւէ , անկապ կերպով , վարանոտ ու գրեթէ կիցկոտուր ձեւի մը տակ ըրաւ . . . ու յետոյ դէպի դուռը յառաջանալով բացաւ զայն ու ձայնեց .

— Ի՛նչա՛ , Ի՛նչա՛ . . .

Ու իսկոյն ներս եկաւ միջահասակ , տեղւոյն ու ծաղկավեր գէմքով , խանձրած մօրուքով ու տարի-քոտ թուրք մը , որ պաշտօնատունին պահակն էր :

— Ի՛նչա՛ , շուտով թիւ 3 առանձնարանը գնա՛ , հրամայեց Լուրժի աղա՝ այնտեղ շղթայակապ երի-տասարդ մը կայ , ա՛ռ բե՛ր ինձի :

Ծերունի պահակը յարգանքով մը գլուխը շարժեց ու հեռացաւ :

Լուրժի աղա կապոյտ շուխայով ծածկուած սե-ղանին վրայ ինկաւ ու սկսաւ խորունկ խորունկ մտածել :

Քիչ յետոյ դուռը բացուեցաւ :

Ներս մտաւ բարձրահասակ , պարթեւ ու յաղթ կազմուածքով , երկաթի գոյն առած դիմագծերով , սեւ ու խոր խոր եղած մօրուքով , մեծ ու ա-րիւնխաւած աչքերով , խորհրդալից ու աղետաւոր նայուածքով եւ անվերջ կեցուածքով կայանաւոր մը , որ հազիւ երեսունն անցած տարիք մը ունէր :

Այս շղթայակապ երիտասարդը Պատրիկն էր : Լուրժի աղա , բերդին այդ լիազօր հրամանա-տարը , պահ մը վեր առաւ իր գեղեցիկ գլուխը , մտախոհ ու խորին կերպով նայուածք մը նետեց Պատրիկին վրայ , նայեցաւ . . . յետոյ ծանր ու խշխշացնող ձայնով մը ըսաւ .

— Ինձի նայէ՛ , Պատրի՛կ , այսօր տասներկու տարի է որ այս թիարանին մէջ կը գտնուիս ու ա-րիւն լոյսէն անգամ զրկուած ես : Կը խոստանա՞ս սրտի ու խղճի մարդ դառնալ , երբ ես քակեմ ձեռ-քովս քու շղթաներդ եւ ազատ թողում քեզ բերդին մէջ՝ միւս թիարապարտ ընկերներուդ պէս :

Մթին ու երկիւղալի ստուեր մը պատեց կաշա-նաւորին կերպարանքը . . . կեցած տեղէն ակամայ շարժում մը ըրաւ , գողգող՝ ու մրմնջեց :

(Շարունակելի)

